

Պիղ, տէր Երեմիա հայրեն պու խորան
մէթլէրնին թահսին իտէրիդ, չիւնքին
պու թարիզ իլէ, հէմ քէնտի դարար
նը չըգարմը յաւաճաք տըր, մէ հէ
տէ, մէդըրու օրայդըյարը չըգարմ
լարա պիր պիղ օլարադ, եանքըլարը
տիւղէլթմէկէ չարքիմես մէճպուր օ
մայտընը մուհիւք օլաճաք տըր :

ԱԶԳԱՅԻՆ

1871 թվական 29 Գումար

... Խաղաղ ժամանակ, որ Հայաստանի մասին եկեղեցիները, որոնք Ստեփանոսի տունը կը կատարէր, Մայր եկեղեցին սքանչելի տեսարան մը կ'ընծայէր նոյն օրը. դըպրաց դասը՝ որուն յատուկ տոնն էր, իւր ներդաշնակաւոր քաղցրիկ երգերովն յարտասուտ շարժեց բոլոր ժողովուրդը, չ'կար հոն մէկը՝ որուն սիրտը Աստուծոյ հետ չը խօսէր. և իւր միտքն ու հոգին Աստուծոյ չը նուիրէր։ Գարոյցի աշակերտք իրենց հիւսնա դասատուի աշխատութեամբ աւելի կ'զմայլեցնէին ժողովրդեան սիրտն իրենց հոն շատակային երգերով, որ մանուկ սրտերէ բխած, զԱստուած ի գութ կը շարժէին։

Կլերական դասու բազմութիւնը առաւել եւս կը բոբորէին ժողովրդեան ջերմեռանդն զգացումներն. անանկ որ իւրաքանչիւրը յայտնի կը խոստովանէր թէ 18 տարիներէ ի վեր Մայր եկեղեցոյ մէջ այնպիսի շքեղ հանդէս մը կատարուած չէր. եւ ահա այս ուրախութեամբ լցուած ձեռքը կուրծքին վրայ դրած իրեն բարի քրտնանայ, եկեղեցոյ գաւթէն այնպէս քաժնուեցան ջերմեռանդ ժողովուրդը գոհ սրտով, և յետ աւարտման եկեղեցոյ Գրգրաց դասը երգեցիկ մանկանց առաջնորդութեամբ զնաց իւր յատուկ սենեակը, ուր ներկայացան Ս. Եսիսկոպոսեանը, վարդապետը, քահանայը և տեղւոյս պատուարժան թաղ. խորհուրդը. և երբ երգերն ընդմիջելով Պատրիարքական փոխանորդ Արք. Տ. Գրիգորեանը քահանայ Մկրեան համառօտ կերպով նկարագրեց դպրութեան որպիսի կարեւոր ըլլալն, եւ դպրաց դասուն իւր շնորհակտութիւնը յայտնելով, բարեմաղթութեամբ մը վերջացուց խօսքը, Նորին սրբութեան յաջորդեց թաղ. խորհուրդոյ անդամներէն Մեծ. Բարթող Էփէնատի Բիւրքապետեան, եւ յայտնեց թէ Աղ. գը իւր դպիւններուն պէտք է երախտապարտ գտնուի նոցա ձրի աշխատութեանց փութ. և Մանուկ Էփէնտի Բարապետան յարգատեւութիւն մաղթելով իւր դոճուսուկութիւն յայտնեց։

Բարթող Էփէնտի Բիւրքապետեան հանդիսականաց սրտին մ'ը մեծ յիշատակ մ'ալ զարթոյց հանգուցեալ Պէղծեան ամբարայն յիշատակը, որուն կենդանադիրը ծաղիկեայ պակաս մը զարդարուած սենեկին ճակատը բարձրացուցած էին. արդարեւ արժանի էր ինչ որ ալ ըրած էին, որուն արդեամբ հաստատուած է յիշեալ ուսումնարանը, ուր դպիւրը կը յաճախեն և իրենց նուիրական պատճառ մինչև ցարդ յաջորդարար կը յարատեւեն։

Տէր, յիշեալ նկարագրութիւնը ընկուտ բուն իսկ շարժառիթը ձեր այն խորհրդածութիւնը եղաւ, որ ասկէ մէկ քանի ամիս առաջ հրատարակած էիք, և որով ցաւ կը յայտնէիք թէ Հայը ոչ իւր կրօնքը և ոչ իւր Հայրենիքը ըստ օրինի պատուել չ'լիտեր. ահա ձեր փառաբան մէկ սկզբունքը յայտնելու թարգման հանդիսանալով կըսեմ թէ Հայաստանեայց Ս. եկեղեցին առանց երկեցողութեան մունջ հարս մ'է, որ չ'խօսիր իւր երկնաւոր փեսային հետ. այս կապը քակող առաքինի խուսիք, այսինքն Գարաց դասը օրհնեալ ըլլայ, և երանի թէ ամեն ատենի համար ըլլար իրենց այդ նուիրական ուսման։

Կը խնդրեմ տէր, իմ օրն հրապարակական գոհունակութիւն յայտնելու բարեհաճիք, որով մնամ և այլն։

Թաղ. Էփէնտի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Զմիւռին վաղուրախան թատրոնը — Պէղծեան մը առ Պ. Ն. Միրզա. — Աղ. Գարայն հիւանդանոց և Հայ ընթերցատուն։

Ստույգ է որ թատրոնը ժողովուրդին հայելին է, ողբու թիւնի մեծ հրահանգն է, հայրենի փառաց ինչ ինչ մասունքները կը ներկայացնէ, ամեն ազգի մէջ այս երկրորդական ընտիր տաճարը դերադասեց և, երկու սեռին կրթութիւնի ճեմարան է թատրոնը. . . . այս սկզբունքներու կուտակեալ տե-

ղին, հանապազ յարգելի է իտալացւոյն, գաղղիացւոյն և այլ եւրոպացւոյն։ Հայն ալ շատունց կառոյց այս տունը, Պօլիս էր նորա կեդրոնը, հոն վարդուխան շատաշխատեցաւ իր խումբը անյողդողդ և անվեհեր պահելու, Սամաթիա, Միջագետք և այլ արուարձանք հիւրնկալեցին այս դործը, անով շատ խնամներ ու հոգածութիւններ եղան, Գողթանի երգիչները թատրոնի մէջ յիշատակուեցան, հիներու օրինակը նորերն ալ արգասաւորեց, այսօր ամեն գաւառացի հայ կը շտապի իւր վարժարանին հետ խումբ մ'ալ կազմել, թատրոն մ'ալ յաւելուլ, թատրոն ըսի չեմ ետիւր հասածի Զմիւռնի վաղուրախան միտքս ինկաւ, այս երջանիկ օրեր վայելող հասարակութեան տաճարը հիմա իտպան և գոյ մնայած է, հեռու քուած են կարծես Զմիւռնացիին եռանդուն զգայմունքները՝ զոր հանգուցեալ աղնիւ Սարգիս Միրզայի օրերն կը յույցնէին, նա վերանորոգեց թատրոնին նախասկզբը գաւառիս մէջ, այն դիւցազուններէն մին էր նա՝ որոնք գործնութիւնը ու քաջութիւնը սրտերնուն մէջ գաղտնի պահելով, գործաւորի մը պէս կը տքնին. յիշեալ Սարգիս Միրզա իւր կենաց մի քանի տարին ալ այս սկզբունքի վերա զոհեց, այլ հիմա ոչ եւս է ալ օրն վաղանցուկ փառքերու հետքը, մարած է նորա ձգած լամբարներուն ամենն ալ, չկայ այն եռանդը ալ հասարակութեան սրտին մէջ զոր մեծ մարդի մը յիշատակները յարատեւ է, քաջալերելով չ'խնայէ գործերը չ'թաղէ, չ'կայ այն եռանդը ալ որ ասկէ հաջիւ քանի մը տարի առաջ ունէր։ Հայուն թատրոնը Բոյնին կը վարձուի, մեր ժողովուրդը Բոյնին ներկայացման կը դիմէ, որպէս թէ Հայը զուրկ է թատրոնի գիտութենէ, Հայը չունէր հայրենիք, չունէր նուազ և քնար. . . .

Զարմանալի հակադրում ունի Զմիւռնի Հայն ալ վաղուրախան թատրոնն ունի աշխոյժ երիտասարդներու խումբ մ'ալ, այլ գործածել չ'գիտէր կամ չուզէր, շինելու կը դժկամակի, քաջալեր չ'կարդար. . . . Եւ ո՞վ չըսեր թէ այս ալ կերպ մը անգղայութիւն, անտարբերութիւն է, ազգատեցութիւն է զոր Զմիւռնի Հայը դեռ կը շարունակէ. . . . Ո՞վ կը գտնէ մեզի թատրոնին դռները՝ երբ փափաքինք, ո՞վ չ'գիտէր մեզի՝ երբ ընդունինք, ո՞վ կը զգարի մեզի երբ միանանք։ Մինչդեռ անանուն գաւառներու մէջ թատրոնը կը նախադրուի, մինչդեռ պզտի աւաններու մէջ ներկայացումներ կը տըրուի, ինչո՞ւ հուսկ ուրեմն Զմիւռնայէս լքեալ, այսպէս թող ու վտարունդի միայ իր թատրոնին, արհամարհէ զանի և չ'կարմիր Բոյնին դէմը իւր ստակները օտարի մը ծոցը դնելու. . . . Սոկայն չ'յուսահատիր երիտասարդութիւնը այս ցուր ընթացքին որ իրենները կընեն, չ'խուսիր ազգասէր երիտասարդներու խումբ մը այս մեռել կայութեան ամբարիւն քովէն. . . . ահա, Պ. Ղուկաս փափաքեան և աշխոյժ պատանին Յ. Կ. Սթեֆան, նոր փորձ մը կը փորձեն Հայրենասիրական անուն ընկերութիւն մի հիմնելով, ահա հաւասիկ կը միանան վաղուրուն վեհոգիներ և կուզեն շնչել ներկային ճակտէն այս սեւ ամպը նորէն թատրոնը բանալով՝ ուր շատ շքեղ կերպիւ կատարուեցաւ քերթողին Պէշիկիշադեանի Արշակ Բ. ը՝ ուր խուս բազմութեան հետ ներկայ էր նաև Բրուսիոյ Հիւպատոսը. այս առաջին ներկայա-

ցումը ի յիշատակ գնիւ Սարգիս վաղուրախանցւոյն էր. . . .

Այո, վաղուրախան զոր քաջ կը ճանչէր փառքեր աւելցնելու և արժանի գլուխներ պահելու։

Պ. Նշան Միրզա, այս աշխոյժ և եռանդուն երիտասարդը՝ որու ունեցած վսեմ հանճարը քաջ ծանօթ է իր բարեկամաց և ընկերներու. այս անգամ ժամանակակից սիրային վէպի մը գործը ի գլուխ հանեց և հրատարակեց։ Գրական տաղանդներու մէջ որ Զմիւռնի ծոցը կը հանգչին նախասկզբը գիւցազն մի եղաւ նա՝ զոր Տօրան ընթերցողները վկայեցին. . . .

Պ. Նշան Միրզա՝ որու երիտասարդական կեանքը շատերու անփոյթ ու հեղգ կարծեցնել կուտային, այսօր կը ծախահարեն զինքը յանհուն եռանդով մը՝ տեսնելով որ նա՝ այնպիսի գրիչներէն մին է՝ որոնք խեղճ ու տըկար ցոյց տալով՝ ժամանակին կապաւէ, կը փորձէ, կը քննէ, կը խորհի և հոսկ պայթիւնը կուտայ՝ զոր կը սրբանայ միջնազ սրտերն ու խիղճերը լուսաւորելու։

Այո, Տօրան առաջին կը հանգիստնայ այսօր ազգային վէպերու մէջ՝ իւր սիրային այլ և այլ նկարուամբերով, ճշգրիտ նկարուամբ, որոնք Պ. Նշան Միրզայէ երբէք չէր յուսացուէր։ Տօրան պատկեր մը եղաւ, պատկեր բարի և քաջ՝ այնպիսի աղջիկներու, որք անուշադիր իրենց ծնողաց խօսքը, ինքզինքնին կը յանձնեն խաբուսիկ խօսքերու, կերծ համբոյրներու և անհեթեթ սիրոյ. . . . Գեղեցիկ սեռին լաւ խրատ մի եղաւ Տօրան, որ իրենց ունեցած միջ ընթացքէն ետ քաշուելով, աւելի առաքինի և համեստ լինելու պիտի ջանան, քան թէ պճնասէր ու գեղադէմ. . . .

Տօրան այն օրիորդներէն էր՝ որուն սէրը տարօրինակ սիրելի մարդին էր, նա Լուսին մը առ ոչինչ և սեւ կեղծիքներուն խաբուելով մաշեցաւ. . . . մեռաւ, երբ Լուսինը վատաբար զինք թողուց ու մէկդի քաշուեցաւ. . . . Այսպէս թշուառներ կը գտնուին ամեն տեղ՝ որոնք փոխանակ սրբագործելու սէրը կը պղծեն ու արտեր կը խորտակեն առ երեւոյթս անկէ հանդը և զբոսանք բաժին հանելով. . . .

Ճշմարիտ և սուրբ սէրը առաքինութեան ու համեստութեան մէջ կը փնտռուի։

Աղգ. Հիւանդանոցը, յոր աւուր ծաղկելու վրայ է և նախանձիկ դուրսին մը կուտանայ ժողովրդեան մէջ։ Ամեն գործ ըստ կարգին, յիշուի անյուսալի փճակէ մը այնպիսի բարեկաւ ողի մը հասաւ, զոր քաղաքակրթեալ ազգի մը, այլ ըսեմ Եւրոպական մի դարձանոց մի եղաւ այլ և այլ հիւանդութեանց։

Այս բարեօրումը բերկրութիւն տըռաւ մեր սրտին՝ որ սովոր է իր շնորհակալքը ամեն ակնհասեա եղած գործերու բարեկաւութեանց մէջ առեբերել յատեան և փաղաքական ժողովը բաւական փոյթ ունի Աղգ. Հիւանդանոցի վրայ, մանաւանդ Մեծ. Բակոր աղա Տայիեան որու գործունէութիւնը ճշմարիտ ազգասիրի մը և մարդասէրի մը ունեցած պարտքը լիովին կատարել կը յայտնէ մերայնայ՝ նաեւ Մեծ. Գարագաշեան, Ստեփան Տայիեան Բակոր աղայի ժողան աշխատութեամբ վկայ աղին Տիկնայք՝ որոնք մեծ տոհմէ ու զերդաստանէ հարուստ ընտա-

նիք են, չեն կաշիր շաբաթը երկու անգամ այցելել Աղգ. Հիւանդանոցը և բնտանի եղբոր ու մօր պէս հաւասարութեամբ խնամել ու սիրովիւ պանդուրը և տեղայի լքեալ տկարներն ու հիւանդները։ Ամեն սիրտ կը բերկրի, ամեն աչք կը ժպտի այս բարի և խքնամակալ անձանց ժողովեանը՝ որ տարիներէ յետէ հոշակաւոր և համբաւարժէք Աղքատսիրաց ընկերութիւնը սուրբ նպատակը ընտրած է, նպատակ մը՝ որ կրնամ ըսել այսօր Աղքատիւնային չի կրնար ծխուել և ուրանալ՝ անկէ ընդունած բարիքներն։

Ներկայ մեր ազգութեան բարի շարժումներու կարգը ընթերցարաններու ու լսարաններու մեծ յառաջադիմութիւնն ալ ակն յայտնի կերբել, գեղեցիկ և վսեմ գործեր. Սամաթիա անգղայիկ ուղեւոր մի եղաւ ըսենք չենք սխալիր։ Սամաթիա՝ այս վաղուրուն և բանխուս հանճարներ կրող տեղին՝ առաջին կրնայ ըսուիլ այսօր՝ իր գիշերօթիկ Աղապեանովը՝ Ա. Բ. Գ. ի ընկերութիւնովը և հասարակաց լսարաններովը, ուր աղքատի և հարուստի, տգէտի և գիտունի խտրութիւն չը տեսնուիր, ամեն գաղափար բաց է, ամեն կարծիք ազատ է, կը համարձակուի տեսլ, Զմիւռնի ալ այսօր երգանիկ կացութիւն մի ունի՝ իր խումբ մը աղքատէր և աղին երիտասարդաց աշխատութիւնէն՝ ըստ որում ընթերցատուն մ'ալ ունի, ուր ամենուն առ հաւասար բաց է, ուր տգէտներ փոքր ինչ կը մտնեն ընկերակալութեան սրբահը և հոն կզգան թէ «Հայն ալ կըկրէ սիրտ մը իրօք» ինչ որ իր վեհանձնութեան կը պատկանի — ընթերցատուն մը, որ օտար ազգաց նախանձելի է, խաղաղին, Գաղղիացին կը յաճախէ իր հայրենիքէն, տէրութենէն ու եղբայրներէն լուր առնելու, վառ գի չկայ հանուր Գաղղիայի և Անգղիայի մէջ թերթ մը, հանդէս մը որ Հայ ընթերցատունէն պակաս ըլլի, չը կայ Տաճկաստանի մէջ Հայերէն, Բուլնարէն, Տաճկերէն և Գաղղիերէն թերթ մը՝ որ այս մեծ տունը չունենայ, Ծնունդ մ'է այս, զոր Մեծ. Գրիգորեան Էփէնատի Բարապետն ծնաւ և զոր իր բարեսէր ու ժիր ընկերները՝ Մեծ. Աղքատ աղգոյ Ղօնճախան, Աղնի. Էփեղեան աղգոյ Մարգար և աղգոյ Մսիրեան Մեծարոյ երիտասարդները ետ չը կեցան միանալու հաստատելու ընկերութիւն մը նորա հովանին ներքեւ որ Զրթնալով ճոխացան։

Ապրիլն նոքա՝ որք բարեացակամ պաշտօնեայնէր են ազգին. ապրիլն նոքա յաւեո՝ որք անտարբեր չեն օգնել ազգին, հետզհետէ դիւրին և լաւ ճամբաներ լսնալով նորա քայլերուն տուջեւ. Ընթերցարան, զոր թերեւս հիմա ձմեռուան երկար գիշերներու մէջ այլ և այլ անձինք թէ Հայ և թէ օտարազգի կատենաբանն խռնեալ երամ մի հանդիսականաց առկա՝ որոնց մէջ կը գտնուին զգայուն և երախտագէտ սրտեր, ուր միշտ կը մրմնջեն ու կորհնեն անոր՝ որ այս օգտաւէտ և մեծ գործը յղացաւ և զոր առաջին Հայը եղաւ Զմիւռնի մէջ այս հանրական կայանը հաստատող։

Միամ' անձնուէր ձեզ
Թ. Գ. ԲԱՐԵԼՈՅ

ՄԱՆՈՒ ԳԱՅԻՆ
ԳԱՐԱԳԵՏ Գ. ՓԱՆՈՍԵԱՆ
Գլխավոր տնօրէն ինքնակալ բարձրագոյն
Նոյն 29 իսկ խանդավառ